«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործում»

Առարկան՝Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝Ասատրյան Նունե

Ուսումնական հաստատություն՝ Արագածոտն մարզ, գ. Կաթնաղբյուրի Մ. Գալշոյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3

Ի՞նչ է քննադատական մտածողությունը----------5

Ի՞նչու է քննադատակ մտածողությունն անհրաժեշտ դպրոցում և առհասարակ մեր կրթական համակարգում----------9

Խթանում, իմաստի ընկալում, կշռադատում /ԽԻԿ/ համակարգի փուլերը----------12

Քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում-15

Եզրակացություն----------16

Գրականության ցանկ----------19

Ներածություն

Ժամանակակից կյանքում բավականին հաճախ ենք հանդիպում «քննադատական մտածողություն» բառակապակցությանը, սակայն այս եզրույթի նշանակումը և սահմանումը այդքան էլ միանշանակ չէ, չկա հաաձայնություն կապված նրա սահմանման հետ: Թեև քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական նոտաներ է ներառում, քանի որ այն զուգորդվում է քննադատել բառին, սակայն այն ներառում է քննել և դատել բառերը: Այսինքն՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգման գալ: Թերևս նման բարդություններն իհայտ են գալիս, քանի որ բառակապակցությունն անգլերենից թարգմանելիս հայերենում չունի համապատասխան լիարժեք արտացոլող բառը, որն իր մեջ ընդգրկում է անգլերեն տերմինը:

Այսպես, քննադատական մտածողությունը, անգլերեն՝ critical thinking իրենից ենթադրում է քննողական մոտեցում, այսինքն, բուն առարկայի բազմակողմանի քննարկում և հետևաբար առավել նպատակահարմար կլիներ, եթե հայերենում ևս այն թարգմանվեր որպես քննողական մտածողություն:

Այսօրվա կրթական համակարգի շեշտը դրված չէ միայն գիտելիքի տրամադրման վրա: Այսօրվա դպրոցի առջև դրված է առավել բարդ խնդիր՝ տրամադրվող գիտելիքի հետ մեկտեղ սերունդների մեջ ձևավորել անհատների, ովքեր կարող են ինքնուրույն և քննադատաբար վերլուծել կյանքում գոյություն ունեցող խնդիրները:

Քննադատական մտածողությունն իրենից ենթադրում է ստացված տեղեկատվությունը վերահիմաստավորելու և ձևավորելու մի գործընթաց, որը կատարելու համար, պետք է կարողանալ ստեղծագործաբար համադրել գաղափարներն ու միջոցները: Եվ սա հնարավոր է բոլոր տարիքներում՝ և կրտսեր դպրոցի և ավագ դպրոցի երեխաների համար: Այն երեխաները, անհատները, ովքեր կկարողանան հասնել սեփական ճշմարտությանը՝ քննադատաբար վերլուծելով տեղեկատվությունը, ապագան վստահաբար նրանց է պատկանելու: Վերջիններս առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չեն ընկնում մեկ ուրիշի

տեսակետի ազդեցության տակ: Նա մտածելու և վերլուծելու շնորհիվ ազատ և անկաշկանդ կարողանում է արտայտել իր կարծիքները:

Ի՞նչ է քննադատական մտածողությունը

Առհասարակ մտածողությունը դա ճանաչողական գործունեության տեսակ է: Մտածողությունը դա այն իմացական գործընթացն է, որի օգնությամբ մարդը դուրս է գալիս զգայական արտացոլման միջոցով ստացված տվյալների սահմաններից, բացահայտում է երևույթների օրինաչափ կապերն ու հատկանիշները: Իրադրության պահանջներից և իրենց զարգացման տարիքային փուլի յուրահատկություններից ելնելով՝ մարդիկ առավելապես օգտվում են մտածողության այս կամ այն տեսակից: Այդ ենթատեսակներից է քննադատական մտածողությունը, ընդ որում մտածողության բոլոր տեսակները գործում են ինքնաբերաբար, պրոբլեմային իրավիճակի կամ խնդրի ընկալման հետ միասին:



Որքան էլ, որ քննադատական մտածողությունը նոր մոտեցում է համարվում կրթական համակարգում, միաժամանակ պետք է փաստել նաև, որ այն ունի հին պատմական արմատներ: Ամենավաղ դիտարկումները հանդիպում ենք Սոկրատեսի ուսմունքում: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, նախքան վերջնական եզրահանգման գալը: Ըստ Պլուտարքոսի՝ աշակերտը սափոր չէ, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել: Տարբեր ժամանակաշրջաններում տարբեր հեղինակներ պարբերաբար անդրադարձել են

տարբեր հեղինակներ: Մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Սթիլը, Մերեդիթը, Թեմփլը և այլք:

Ռոբերտ Էնիսը, քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, այն սահմանում է որպես ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը մկիտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել:

Մ. Սկրիվենը և Ռ. Փոլը գտնում են, որ քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության և, կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու և գնահատելու մտավոր գործընթացը, որը ծառայում է որպես ուեցույց անհատի համոզմունների ձևավորման և գործողությունների համար:

Դայանա Հալպերնը ևս փորձել է բացահայտել գիտելիքի և մտածողության միջև կապը: Նա գտնում է, որ նոր գիտելիքի ձեռքբերման և կառուցման համար մեզ օգնում է մտածողությունը, որի քննադատական տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ բուն փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս:

Բենջամին Բլումը քննադատական մտածողությունը համարում էր բարձրակարգ մտածողություն՝ նկատի ունենալով ճանաչողական հմտությունների դասակարգման աստիճանական զարգացումը, որն էլ իր հերթին հայտնի է <<Բլումի տաքսոնոմիա>> անունով:

Կրթական փորձագետ Ս. Խաչատրյանը Բուն թիվիին տրված հարցազրույցում Արևիկ Անափոսյանին ասում է, որ չնայած որ քննադատական մտածողությունը քննական դատողությունն է, այօր այն կորցրել է իր իմաստը և մենք հաճախ քննադատություն ասելով հասկանում ենք բացասական կոնոտացիայով եզրահանգումներ կամ գնահատականներ: Այս մտածողությունը նույնականացնում ենք նաև ռեֆլեկտիվ մտածողության հետ և եթե նայենք այս տեսանկյունից՝ քննական մտածողության հինգ փուլ կա: Առաջին փուլն այն է, երբ մենք փորձում ենք ճանաչել մեր խնդիրը, փորձում են տարբեր կողմերից զարգացնել, առաջ գնալ, սցենարներ մշակել, որպեսզի հասկանանք թե որն է մեր խնդիրը: Երկրոդ փուլը խնդիրը սահմանելն է, ձևակերպելը: Երրորդ թուլում, երբ արդեն ձևակերպել ենք խնդիրը, փորձում ենք

ուսումնասիրել, դա զուգորդվում է փաստերի հավաքագրմամբ, այլ մեթոդներ կիրառմամբ: Չորրորդ և հինգերորդ փուլերը կիրառման և գնահատման փուլերն են

Գտած պատաս խանները փորձում ենք կիրառել, մեր գտած լուծումները մեր խնդիրները լուծում են արդյոք, այնուհետև սահմանում ենք մեր հիպոթեզը՝ ասելով, որ ապացուցել ենք կամ չենք ապացուցել: Քննական մտածողությունը մասնագիտական որակ է թե՞ քաղաքացիական: Հնարավոր է, արդյոք, որ օրինակ՝ ես, ֆիզիկայի լաբորատորայում կամ նրա ժամին լինեմ քննական մտածող մասնագետ, դուրս գամ ֆիզիկայի լաբորատորիայից փողոց՝ դեպի հասարակական կյանք և դառնամ հարմարվող, լռող, անտարբեր քաղաքացի…

Քննադատական մտածողություն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, քանի որ այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը:

Մերօրյա ժամանակաշրջանում, հատկապես կարևոր է ունենալ քննադատակ-քննողական մտածողություն, քանզի օրեցօր փոփոխվող իրադարձությունները փոխում են մարդու կյանքի շատ մոտեցումներ, կարիքներ և ըտեսակետները: Զարգացող տեխնոլոգիաների դարաշրջանում կարևոր է ոչ այնքան ինֆորմացիա գտնել, որքան կարողանալ զտել, մաքրել տվյալ ինֆոն և ճիշտ կողմնորոշվել: Այլ ոչ թե X ինֆոյի հանդիպելիս, առանց քննարկել, մտածելու ընդունել որպես ճշմարտություն և շարժվել ըստ դրա: Այլ խոսքով համաշխարհային քաղաքակրթության կյանքի բոլոր կողմերի վրա իր ներգործությունն են ունենում տեխնոլոգիական զարգացումները: Ուստի գնալով ավելի ենք համոզվում, թե որքան անհրաժեշտ է մեդիագրագիտությունը և քննադատական մտածողության տարածումը մեր երկրում:

Դեռ խորհրդային ժամանակներից հայտնի է այն անեկդոտը, երբ շուկայի մսավաճառը որոշում է ընդունվել կոմունիստական կուսակցություն և, մուծվելով, առնում է իր կուսակցական տոմսը, սակայն ամեն դեպքում, թեկուզ ձևականորեն, պիտի «քննություն» հանձնի:

Հանձնաժողովն ուզում է, որ ինքն էլ, իրենք էլ հեշտ պրծնեն, և, ցույց տալով պատին կախած Մարքսի նկարը՝ նախագահը հարցնում է.

- Սա ո՞վ է:

Մսավաճառը չգիտի:

Մատնացույց են անում Էնգելսի դիմանկարը:

- Իսկ սա՞ ով է, գիտե՞ս:

Չգիտի:

Դե գոնե Լենինին էլ հո պիտի ճանաչի:

Բայց ոչ:

- Ախր ինչպե՞ս մենք քեզ ընդունենք կուսակցություն, եթե դու նույնիսկ

Լենին չգիտես:

- Իսկ դու, օրինակ, փինաչի Մկոյին ճանաչու՞մ ես, - ասում է մսավաճառը:

- Ոչ, - ասում է նախագահը:

- Իսկ ջեբկիր Կարոյի՞ն:

- Ոչ:

- Բա էլ ի՞նչ ես ուզում: Դու քո շրջապատն ունես, ես՝ իմը:

Այդպես, հիմա բոլորը տարբեր «շրջապատ» ունեն, տարբեր «նշանային» հասկացություններ ու հանգրվաններ:

Եվ այդ իրադրության մեջ դիմացինդ պիտի քեզ գոնե հասկանա: Եթե ոչ համաձայնի, ազդվի կամ տոգորվի՝ գոնե հասկանա, որպես հաղորդակցության նախնական և ամենահիմնային փուլ:

Մեր կրթական համակարգերի խնդիրներից մեկն էլ հենց այն է, որ մարդկանց սովորեցնում են արհեստը՝ «փեշակը», առանց քննարկելու ավելի նախնական ու հիմքային սկզբունքները, արժեքները:

Ի՞նչու է քննադատական մտածողությունն անհրաժեշտ դպրոցում և առհասարակ մեր կրթական համակարգում

Հայաստանում, այսօր, շատ մանկավարժներ տարբեր որոնումների մեջ են: Նրանք հիմնականում, ցանկանում են գտնել, այնպիսի մեթոդներ, հնարներ, որոնք նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությանը: Համաշխարհային մանկավարժության մեջ կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ կարող են կիրառվել մեզանում: Այդ նորարական մեթոդների և գործելակերպի մի համակարգ է քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով ծրագիրը:

Այս ծրագրի նպատակն է՝ կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ, այսինքն քննադատաբար մտածող անհատներ, ովքեր իզորու են լիննելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ և անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ինչպես նաև՝ ուշադիր և հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և կարողանալ վստահաբար որոշումներ կայացնել:

Քննադատական մտածողությանը սովորաբար հակադրվում է արխայիկ կամ դոգմատիկ մտածողությունը, որն իր տրամաբանությամբ, կառուցվածքով ու գործառնական նպատակադրմամբ որոշ դեպքերում անգամ բացառում է քննադատական մոտեցումն ու վերլուծությունը: Դոգմատիկ մտածողությունը համաձայնությունների ու պայմանավորվածությունների վրա հիմնված մտածողությունն է, որի հիմնական խնդիրը կայանում է կարծրատիպերի ձևաորման մեջ՝ պայմանավորվածությունների քարացման և «ժամկետանց» դառնալու արդյունքում:

Դոգմատիկ մտածողության համակարգի ձևավորումը տրամաբանական գործընթացի արդյունք է. բանն այն է, որ յուրաքանչյուր մարդ փորձում է նկարագրել

իրեն շրջապատող աշխարհն օգտագործելով այն նկարագրողական գործիքակազմը,

որն ունի: Սակայն աշխարհի նկարագրությունն ու նույն աշխարհի մասին մարդու իրական ընկալումը, նոր գիտելիքի ձեռքբերման արդյունքում աստիճանաբար սկսում են իրարից տարբերվել և արդյունքում աշխարհի հին նկարագրությունը աստիճանաբար դառնում է դոգմատիկ, հագենում է կարծրատիպերով ու կլիշեներով, որոնք սկսում են խանգարել նոր գիտելիքի ընկալմանը և ճանաչողության դաշտի ընդլայնմանը:

Այս իրողության վաղ օրինակ է արևակենտրոն համակարգի մասին գիտելիքի

ընկալումը միջնադարում: Հարուրամյակներ շարունակ քրիստոնեական Եվրոպայում

մարդիկ հիմնվելով իրենց գիտելիքի վրա համոզված էին, որ ամեն ինչ պտտվում է երկրի շուրջ և երբ Գալիլեյը, Բրունոն, Կոպերնիկոսը և այլոք սկսեցին նոր գիտելիքի վրա հիմնված պնդումներ անել արևակենտրոն համակարգի մասին քրիստոնեական

դոգմատներով ապրող հասարակությունը սկզբնական շրջանում չընդունեց այդ նոր

գիտելիքը, ավելին՝ ընդդիմացավ և հետապնդումների ենթարկեց այդ գիտելիքը մատուցողներին: Պատմության մեջ բազմաթիվ այլ օրինակներ կան, որոնք ցույց են տալիս դոգմատիկ մտածողության կարծրատիպային կառուցվածքը և որպես այլընտրանք առաջարկում են քննադատական մտածողությունը:

Հարկ է նշել, որ աշխարհի մասին «նկարագրած» և «իրական» պատկերացումների տարբերությունը աստիճանաբար մեծանալով ի վերջո հանգեցնում է մի իրավիճակի, որում այլևս հնարավոր չէ օգտվել «հին» նկարագրությունից և առաջանում է նոր նկարագրության անհրաժեշտությունը, սա առաջին հերթին վերաբերում է հասարակական հարաբերությունների փոփոխությանը, որի վրա անկյունաքարային ազդեցություն ունի մարդու սեփական «ես»-ի շարունակական վերաիմաստավորումը՝ նոր գիտելիքի հիման վրա։

Ժամանակակից աշխարհում կրթական համակարգերում քննադատական մտածողության կարևորությունն էլ ավելի է աճում, քանի որ տեղեկատվական հոսքերի բազմազանության ու արագության պայմաններում մարդուն անհրաժեշտ են գործիքներ ու մեթոդներ, որոնք նրան հնարավորություն կտան ֆիլտրել, դասակարգել և գիտելիքի վերածել այն տեղեկատվությունը, որն իրեն անհրաժեշտ է։ Իսկ անհրաժեշտությունն, ինչպես նշվեց վերևում, բխում է արժեքից ու նպատակադրումից, որի դրսևորման առավել արդյունավետ եղանակը պրոեկտային հարացույցն է։

Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես «ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել» (Ennis, 1989)։ Մեկ այլ աշխատության մեջ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը (Ennis, 2008)։ Սակայն սա ամենևին չի նշանակում, որ խնդրի շուրջ քննադատաբար մտածելու արդյունքում կբացահայտվի ճշմարտությունը։ Հետևաբար, ընկալումը, թե որն է ճշմարտություն, մեծապես կախված է մտածողի նախապաշարմունքից և հմտություններից։

Քննադատական մտածողությունը ներառում է մի կողմից տրամաբանական մտածողությունը, իսկ մյուս կողմից՝ հարցեր տալու և ցանկացած հայտարարության համար ապացույցներ որոնելու ունակությունը։

Խթանում, իմաստի ընկալում, կշռադատում /ԽԻԿ/ համակարգի փուլերը

Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով ծրագրի համակարգն իրենից ներկայացնում է ուսուցման գործընթացի երեք փուլեր՝ նյութը սովորելուց առաջ/խթանում/, նյութը սովորելու ընթացքում/իմաստի ընկալում/, նյութը սովորելուց հետո/կշռադատում/:

Համակարգը կարճ անվանում են ԽԻԿ:Այն որոշ ձևաչափով հիշեցնում է ավանդական դասի կառուցվածքը/ նախապատրաստական զրույց, նոր դասի հաղորդում, ամփոփում/:

ԽԻԿ համակարգի առաջին փուլի՝ խթանման նպատակն է խթանել աշակերտների հետաքրքրությունը և ցանկությունը՝ նոր նյութը հետազոտելու ոլորտում, դրդում է աշխույժ հետաքրքրությամբ վերհիշել ուսուցանվող թեմայի շուրջ իրենց ունեցած ամբողջ տեղեկատվությունը: Սկսում են խորհել բուն թեմայի մասին, հարցեր տալիս դրա վերաբերյալ: Այս կերպ աշակերտները կարողանում են լայն ու կայուն հիմք պատրաստել՝ նոր տեղեկատվությունն ընդունելու և այն հիմնավորապես յուրացնելու համար: Ի տարբերություն ավանդականի՝ այստեղ ամենագործուն դերը աշակերտինն՝, իսկ ուսուցիչն ուղղորդողի դերում է:

Բերենք խթանման փուլի մեկ օրինակ / Դիզայնի տարրերը թեմայով, տեխնոլոգիա 7-րդ դասարան/:

Մինչ նոր դասանյութին ծանոթանալը, ուսուցիչն առաջարկում է երեխաներին՝ մտքերի տարափով թվարկել այն ամենը, ինչ գիտեն կամ կարծում են, թե գիտեն դիզայնի մասին՝ առանց մտահոգվելու դրանց ճիշտ կամ սխալ լինելու իրողությամբ: Այստեղ կարևորը դիզայնի տարրերի մասին նրանց ամբողջ իմացածը վեր հանելն է: Դրանք գրվում են գրատախտակին, ապա յուրաքանչյուր գրվածի շուրջ տարվում է քննարկում և մտքերի փոխանակում: Այս ընթացքում ի հայտ են գալիս նաև եղած

անհամաձայնությունները: Ուսուցիչն երբեմն-երբեմն հարցեր է տալիս, թե՝ արդյո՞ք բոլորն են համաձայն առաջարկված մտքին և եթե այո կամ ոչ՝ ինչու՞: Յուրաքանչյուր պատասխանից առաջ ուսուցիչն աշակերտին մտածելու ժամանակ է տրամադրում, պատասխանելիս խրախուսում արտահայտած ինքնուրույն կարծիքները:

Մտքերի տարափ մեթոդի նպատակն է խթանել աշակերտների հետաքրքրքսիրությունը նոր նյութի նկատմամբ, վեր հանել թեմայի վերաբերյալ իրենց ունեցած տեղեկությունները: Արտահայտված տարբեր կարծիքներն ու գիտելիքները նպաստավոր պայմաններ են ստեղծում աշակերտների հետաքրքրասիրությունն ու ուշադրությունը կենտրոնացած պահելու համար: Կարող են առաջանալ նորանոր հարցեր, որոնք նույնպես կխթանեն աշակերտների հետաքրքրությունները նոր նյութի նկատմամբ: Այս փուլում էական գործոն է այն, որ ուսուցիչը հնարավորինս քիչ է խոսում՝ ասպարեզը տրամադրելով աշակերտներին:

2. Երկրորդ փուլը կոչվում է իմաստի ընկալման փուլ: Այս փուլում սովորողները հաղորդակցվում են նոր տեղեկատվության և նոր գաղափարների:

Ամենակարևորն այստեղ խթանման փուլում ձեռք բերված աշակերտների ներգրավման աստիճանի և հետաքրքրության պահպանման կարողությունն է: Բացի այդ՝ աշակերտները վերահսկում են իրենց ընկալումը, փորձում նոր ստացված տեղեկատվությունը հարմարեցնել իրենց մտքում արդեն առկա իմացություններին:

Կան մեթոդներ, որոնց օգնությամբ կարելի է աշակերտների հետաքրքրասիրությունը կայուն պահել: Օրինակ՝ գրառումների համակարգ՝ արդյունավետ ընթերցանության և մտածողության համար մեթոդը:

Տեքստը լուռ ընթերցելիս աշակերտը մատիտով նշումներ է կատարում այն հատվածների կողքին,

որոնց մասին գիտի / + նշանով / և այն հատվածների կողքին, որոնց մասին չգիտի / - նշանով /: Եթե երեխաները դժվարանում են կարդալ, ուսուցիչն ինքն է կարդում, իսկ աշակերտներն ուշադիր հետևելով տեքստին՝ նշումներ են կատարում:

Ավանդական ուսուցման ժամանակ այս փուլում նոր դասը միայն ընթերցվում է կա՛մ ուսուցչի, կա՛մ աշակերտի կողմից՝ առանց տեքստի վրա որևէ աշխատանք կատարելու: Արդյունքում՝ աշակերտը քիչ բան է հիշում կարդացածից:

3.ԽԻԿ համակարգի վերջին փուլը կշռադատման փուլն է: Այս փուլի նպատակն է՝ աշակերտների միջև ծավալել քննարկում, որի ընթացքում միմյանց հետ հաղորդակցմամբ, նրանք ծանոթանում են տարբեր գիտելիքների, պատկերացումների, մտածում դրանց շուրջ, հարցեր տալիս, մեկնաբանում, բանավիճում, հակադրվում: Արդյունքում՝ կառուցվում է սեփական իմացական դաշտը: Այս փուլում աշակերտն իսկապես յուրացնում, սեփականացնում է նոր գիտելիքը, ընկալածն արտահայտում է սեփական բառերով ու ձևակերպումներով:

Դիզայնի տարրերը թեմայի հետ կապված տեքստը կարդալուց և նշումներ կատարելուց հետո աշակերտները ներկայացնում են իրենց գրառումները: Ապա դրանց շուրջ քննարկում է կազմակերպվում՝ ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ: Անդրադառնալով խթանման փուլում մտքերի տարափի ժամանակ գրատախտակի գրառումներին՝ ողջ դասարանով համեմատում և քննարկում են այն կետերը, որոնց վերաբերյալ համաձայնություն կամ տարաձայնություններ են ի հայտ եկել: Պարզաբանվում է, թե տեքստը կարդալուց հետո փարատվեցի՞ն արդյոք նրանց կասկածները: Վերջում աշակերտներին հանձնարարվում է շարադրել ափոփ, թե ինչ է դիզայնի և ինչ տեսակներ ունի, ապա ցույց տալ միմյանց:

Այս աշխատանքի նպատակն է՝ օգնել աշակերտին ամփոփել ուսումնասիրվող թեմայի շուրջ իր ունեցած պատկերացումները:

Ուսուցչի մասնագիտական-մանկավարժական մակարդակն արդեն համարժեք արձագանք է գտնում աշակերտների վերաբերմունքի մեջ, երբ սովորողներն իրենք արդեն ուսուցման ընթացքում դրսևորվում են որպես հավասարազոր որոնողներ ու կշռադատողներ: Ուսուցման այս եղանակների ներդրումը նպատակ ունի ապահովելու աշակերտների աշխարհընկալման ինքնուրույնությունը, զարգացնելու նրանց տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական երևակայությունը:

Քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ կարող ենք համոզվել, որ մեր դպրոցահասակ սաներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է. զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են, ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին, հարգանքով լսեն բազմազան կարծիքներ, պատրաստ լինեն և ձևակերպել, և հարկ եղած դեպքում նաև կասեցնել սեփական դատողությունները:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ինչպես գիտենք ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար ունենալու համար, իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից: Այսինքն, յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը:

Հաճախ ենք հանդիպում աշակերտների, որոնք նոր են կարդացել ինչ-որ ստեղծագործություն ու շատ քիչ բան են հասկացել: Վատ ընկալունակությունը բացատրվում է պարզ պատճառով, պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն ինչպես կարդան, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին՝ ուսուցիչը կարող է օգնել աշակերտներին՝ խորհել կարդացածի մասին:

Եզրակացություն

Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը: Քննադատական մտածողությունը մի գործընթաց է, որի հիմքը դրվում է դպրոցում աստիճանաբար,ուսումնառության յուրաքանչյուր փուլում:Դրա հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը:Ակտիվ քննարկումների արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է աշխարհայացք,որը դուրս է նախապաշարմունքներից ,ինքնուրույն վերաբերմունք այս կամ այն երևույթների հանդեպ:

Այսպիսով, եկանք այն եզրակացության, որ քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Քննադատական մտածողություն ունեցող անձը փնտրում է իր խոսքերի լավագույն ապացույցները և ցանկացած իրավիճակի լավագույն բացատրությունը:

Նրա ապացույցները հնարավորինս պարզ են և բացառում են սխալ ընկալման հնարավորությունը:

Քննադատական մտածողության կարևորությունը՝ ներառում է փաստը տարբեր տեսանկյունից դիտելու ունակություն: Սա տարբեր երևույթների պատճառները գնահատելու ունակությունն է: Քննադատական մտածողությունը ենթադրում է նաև ազնվություն այն իմաստով, որ մենք չպետք է հուզականորեն կողմնորոշվենք որևէ իրավիճակի նկատմամբ:Զգացմունքայնորեն կողմնակալ դառնալով ՝ մենք դիմում ենք ինքնախաբեության: Փոխարենը, նման պահերին մենք պետք է մտածենք առանց նախապաշարմունքների: Իրավիճակի վերաբերյալ բոլոր հնարավոր տեսակետները պետք է հաշվի առնել նախքան վերլուծելը: Սա օգնում է արդյունավետորեն լուծել խնդիրները: Կրիտիկական մտածողությունը պետք է զարգացնել դեռ վաղ

մանկությունից, քանի որ մեծահասակ տարիքում մարդու մտածելակերպի փոփոխումը ծայրաստիճան դժվար է:

Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

• կանխորոշում են ուսումնառության նպատակները,

•հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման,

• նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,

• նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,

•ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը:

Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները

__ Կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք:

__Կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած

փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի:

__ Կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ

մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: Դասարանում գլխավոր դերակատարը կդառնա աշակերտը/ աշակերտակենտրոն ուսուցում/

__Աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում

միմյանց հետ:

__Կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների

համակարգում:

__ Կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել

ցանկացած տեղեկություն:

Գրականության ցանկ

Бутенко А. В., Ходос Е. А. Критическое мышление: метод, теория, практика. Учеб.-метод. пособие. М.: Мирос, 2002. — 176 с.

Халперн Д. Психология критического мышления. — СПб.: Питер, 2000. — 512 с

Քննադատական մտածողություն: Տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ / Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, Երևան 2019

http://boon.am/arevik-serob/

https://erexa.am/blog/qnnadatakan-mtacoxutyuny-erexaneri-mot/

http://shsu.am/media/journal/2019n1b/6.pdf

https://hy.wikipedia.org/wiki/%D5%94%D5%B6%D5%B6%D5%A1%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%BF%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B

https://davtyantamarablog.home.blog